ԱՆԳԵԼԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՊՐԻՍԿԻՂԱ ԵՒ ԱԿՅՈՒՂԱՍ

Պողոս Առաքյալն իր ողջ քարոզչական գործունեության ընթացքում ունեցել է շուրջ ինը փասնյակ համագործակիցներ, որոնց թվում էին նաև ազգությամբ հրեա Ակյուղաս եւ Պրիսկիղա ամուսինները[1] (հուն.՝ Ακυλασ και Πρισκιλλα, լատ.՝ Aquilas՝ «արծիվ» (aquila) եւ Priscilla՝ «հին», «հնագույն» (prisca) բառերից)[2]: Ակյուղասն ավանդաբար համարվում է նաև 70 առաքյալներից մեկը[3]:

Նոր Կտակարանը մեզ շատ քիչ տեղեկություններ է փոխանցում այս անձանց մասին, սակայն համադրելով սակավաթիվ այդ տեղիները, կարող ենք ստանալ նախնական քրիստոնեության տարածման դժվարին գործի համար իրենց կյանքը տված այս ընտանիքի գործունեության համառոտ նկարագիրը, որն այսօր էլ կարող է լինել հոգեւոր-բարոյական պատկառելի նկարագրի եւ անմնացորդ ծառայասիրության օրինակ: Առաջին տեղեկություններն այս անձանց մասին գտնում ենք Գործք Առաքելոցում. «Սրանից յետոյ Պօղոսը Աթէնքից մեկնելով՝ եկաւ Կորնթոս. եւ այնտեղ գտաւ Ակիւղաս անունով մի հրեայի, ծագումով պոնտացի, որը իր կնոջ՝ Պրիսկիղայի հետ նոր էր եկել Իտալիայից, համաձայն Կղօդէոս կայսեր հրամանի, որով բոլոր հրեաները Հռոմից պէտք է հեռանային» (Գործք. ԺԸ 1-2[ա]):

Ակյուղասը ծագումով պոնտացի հրեա էր, որ ինչ-ինչ պատճառներով գալով Հռոմ, այստեղ ամուսնանում է Պրիսկիղայի հետ: Հռոմում հրեաները դեռեւս Օգոստոս կայսեր օրոք բավական մեծ թիվ էին կազմում: Հեթանոսները, սակայն, ատում էին հրեաներին սնահավատության (թվացյալ կամ իրական) եւ մոլեռանդության, իսկ հռոմեական կայսրերը վերջինների պատճառով առաջացող հաճախակի խժդժությունների եւ ընդվզումների համար: Շուտով այս ամենին ավելանում է նաև հրեականությունը քրիստոնեության հետ շփոթող հեթանոսական թյուր կարծիքը, ինչն էլ իր հերթին ստիպում է, որ հեթանոսները եւ ի մասնավորի հռոմեական իշխանություններն սկսեն կասկածանքով եւ անհանդուրժողականությամբ մոտենալ նաեւ քրիստոնյաներին: Հատկապես Կլավդիոս կայսեր տիրապետության օրոք սկսեց քրիստոնեական հալածանքների մի նոր շրջան, որի ընթացքում Ք. հ. 49թ. կայսրը բոլոր հրեաներին Հռոմից վտարելու հրաման արձակեց, այդ մասին խոսում է հենց Սվետոնիոսն իր «Տասներկու կեսարների կյանքը» պատմական կոթողային աշխատության մեջ: Եւ քանի որ հռոմեական իշխանությունները քրիստոնեությունը դիտարկում էին որպես հուդայական կրոնի հերթական աղանդ, հետեւաբար այս հրամանով քրիստոնյաներին եւս բռնի կերպով վտարում էին Հռոմ քաղաքից: Այս ընթացքում է որ, ինչպես եւ նշվում է Գործք Առաքելոցում, Ակյուղասն ու Պրիսկիղան եւս աքսորվում են Իտալիայիձեռ բնակություն

1 Աղոթք Հառնակը կարծում էր, որ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն Ակյուղաս եւ Պրիսկիղա ամուսնական զույգն էր, սակայն այս տեսակետի հաստատման համար լուրջ փաստարկներ այդպես էլ չգտնվեցին (**Lavinia Cohn-Sherbok**, Who's Who in Christianity, London and New York, 1998, p. 250):

2 **А. Пономарев**, Акилла и Прискилла, ПБЭ, т.1, СПБ 1900-1911гг., 387.

3 **Свящ. Афанасий Гумеров**, Акила и Прискилла, ПЭ, М., 2000, 391.

հաստատում Կորնթոսում, քանի որ մասնագիտությամբ վրանագործներ էին, իսկ Կորնթոսը լի էր շրջիկ առեւտրականներով, որոնք կարիքն ունեին վրանների[4]: Այստեղ էլ առաջին անգամ Ք. հ. 52թ.՝ իր երկրորդ քարոզչական ճամփորդության ժամանակ նրանց է միանում Պողոս Առաքյալը: «Եւ որովհետեւ արհեստակից էր, նրանց մօտ մնաձեւ աշխատում էր, քանի որ արհեստով վրանագործներ էին: Նա ամէն շաբաթ օր քարոզում էր ժողովարանում եւ համոզում հրեաներին ու հեթանոսներին: Երբ Շիղան եւ Տիմոթէոսը Մակեդոնիայից իջան եկան, Պօղոսը Հոգու կողմից մղում էր վկայութեամբ փաստելու հրեաներին, թէ Յիսուսն է Քրիստոսը» (Գործք. ԺԸ 2[բ]-5):

Արդյո՞ք Ակյուղասն ու Պրիսկիղան մինչ Պողոս Առաքյալին հանդիպելը ընդունել էին քրիստոնեություն, թե դարձի էին եկել վերջինիս հանդիպելուց հետո՝ հստակ հայտնի չէ: Այս հանդիպումից հետո, սակայն, Ակյուղասն ու Պրիսկիղան դարձան Պողոս Առաքյալի հավատարիմ ընկերներն ու նվիրյալ գործակիցները: Պողոսը բնակություն է հաստատում նրանց տանը եւ քանի որ Ակյուղասն ու Պրիսկիղան զբաղվում էին վրանագործությամբ, Առաքյալն սկսում է օգնել նրանց, որովհետեւ ինքն էլ հմուտ էր վրանագործության արհեստի մեջ: Շուտով նրանց են միանում նաեւ Տիմոթեոսն ու Շիղան, ովքեր այստեղ էին եկել Մակեդոնիայից՝ Թեսաղոնիկեցիների եկեղեցու մասին մխիթարական լուրերով (հմմտ. Գործք. ԺԸ 5):

Հետաքրքրական է աշխարհիկ կյանքի պարզության եւ հոգեւոր վեհության այս անսովոր համադրությունը, որ լավ տեսանելի էր նախնական քրիստոնեության դարաշրջանում ապրող բոլոր քրիստոնյաների կյանքում, եւ սա տարօրինակ չէր, քանի որ Քրիստոս ինքն էլ ծնվել ու կենցաղավարում էր պարզագույն եւ հասարակ միջավայրերում, կիսում էր իր երկրավոր հոր՝ Հովսեփի աշխատանքը եւ իր տնօրինական գործունեությանը մասնակից դարձնում պարզ ձկնորսների:

Ինչպես հայտնի է, Կորնթոս քաղաքը Պողոս Առաքյալի վրա այնքան էլ հաճելի տպավորություն չթողեց: Եթե Աթենքը, որտեղ ոչ վաղ անցյալում եղել էր Պողոս Առաքյալը, հունական մշակույթի եւ կրթության կենտրոն քաղաք-համալսարան էր, ապա Կորնթոսը՝ ընդհակառակն, ամենապարբեր արատների եւ հեթանոսական բոլոր հնարավոր պաշտամունքների կենտրոն էր եւ հայտնի իր անբարո նկարագրով: Հետեւաբար, բնական էր, որ ճամփորդող քարոզիչի համար չափազանց դժվար պիտի լիներ այդ իրավիճակում հեշտությամբ կողմնորոշվելն ու ավետարանական ճշմարտությունները քարոզելը: Ամենայն հավանականությամբ Պողոսը Կորնթոս էր եկել միայնակ: Դա, անկասկած, պիտի առավել ուժեղացներ անհանգստությունը, ինչպես եւ տեսնում ենք հենց իր խոսքերում. «Եւ ես տկարութեամբ, երկիւղով եւ սաստիկ դողով եղայ ձեզ հետ» (Ա Կորնթ. Բ 3)[5]:

Կորնթոսում Ակյուղասի եւ Պրիսկիղայի տնից Պողոս Առաքյալն ամեն շաբաթ գնում էր ժողովարան՝ քարոզելու: Ժողովարանում Պողոսի քարոզը դժգոհությունների մեծ ալիք բարձրացրեց մոլեռանդ հրեաների շրջանում, եւ եթե չլիներ Ակյուղասի եւ Պրիսկիղայի աջակցությունը, ապա Պողոսն ամենալուրջ վտանգների առաջ կարող էր կանգնել: Կորնթոսում, ինչպես նաեւ Եփեսոսում, Ակյուղասն ու Պրիսկիղան, վտանգելով իրենց կյանքը,

4 Տե՛ս, **Архимандрит Никифор**, Иллюстрированная библейская энциклопедия, М., 2008, էջ 25:

5 Այս ժամանակ է, որ Պողոս Առաքյալը գրում է թեսաղոնիկեցիներին ուղղված երկու նամակները՝ հիշատակելով վերը նշված իր գործակիցների անունները (հմմտ. Ա Թսղ. Ա 1, Բ Թսղ. Ա 1):

հրեաներից թաքցնելով՝ իրենց տանն էին պահում Պողոս Առաքյալին, ինչի մասին վկայում է Ք. հ. 59 թ. Պողոս Առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված նամակի վերջաբանում առկա ողջույնի խոսքը. «Ողջունեցէք Պրիսկէին եւ Ակիւղասին՝ իմ գործակիցներին ի Քրիստոս Յիսուս, որոնք իմ անձի համար վտանգեցին իրենց գլուխը, եւ որոնցից միայն ես չէ, որ շնորհակալ եմ, այլեւ՝ հեթանոսների բոլոր եկեղեցիները: Ողջունեցէք եւ նրանց առտնին եկեղեցին» (հմմտ. Հռոմ ԺԶ 14): Պողոսը Կորնթոսում մնաց եւ քարոզեց մոտ տասնութ ամիս. «Իսկ Պօղոսը դեռ շատ օրեր մնալով՝ եղբայրներից հրաժեշտ առաւ եւ նաւարկեց դէպի Ասորիք: Նրա հետ էին նաեւ Պրիսկիլան եւ Ակիւղասը: Նա Կենքրայում գլուխը խուզել էր, քանի որ ուխտ էր արել: Եւ Եփեսոս հասնելով՝ նրանց այնտեղ թողեց եւ ինքը ժողովարան մտնելով՝ խօսքն ուղղեց հրեաներին: Եւ նրան աղաչեցին, որ երկար ժամանակ այնտեղ մնայ, բայց յանձն չառաւ, այլ հրաժեշտ տուեց նրանց ու ասաց. «Աստծու կամքով նորից կը գամ ձեզ մօտ»: Եւ Եփեսոսից մեկնեց ու իջաւ Կեսարիա. դրանից յետոյ ելաւ վեր, Երուսաղէմ եւ ողջոյն տուեց եկեղեցուն. ապա իջաւ Անտիոք » (Գործք. ԺԸ 18-22):

Այս ամենից հետո Պողոսը հեռացավ Կորնթոսից, իսկ Ակյուղասն ու Պրիսկիլան ուղեկցեցին նրան: Կենքրայի նավահանգստից ճանապարհ ընկնելով՝ նրանք հասնում են Եփեսոս, որտեղից Պողոսն շտապում է Երուսաղեմ՝ Զատկի տոնին մասնակցելու՝ Եփեսոսում թողնելով իր ուղեկիցներին եւ խոստանալով շուտով վերադառնալ: Իսկ Ակյուղասն ու Պրիսկիլան Եփեսոսում գտնվելու ընթացքում, իրենց շուրջը համախմբելով քրիստոնյաներին, այստեղ եւս հիմնում են իրենց առտնին եկեղեցին, ինչի մասին վկայում է եւ Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղած իր նամակում, որ գրել էր հենց Եփեսոսում. «Ձեզ ողջունում են Ասիայի եկեղեցիները: Մեծապէս ողջունում են ձեզ ի Տէր Ակիւղասը եւ Պրիսկիլան իրենց տան մէջ եղող եկեղեցիով հանդերձ» (Ա Կորնթ.. ԺԶ 19):

Այս ժամանակ Եփեսոսում էր գտնվում ազգությամբ հրեա Ալեքսանդրացի Ապողոսը, ինչպես եւ կարդում ենք Գործք Առաքելոցում. «Ապողոս անունով մի հրեայ, ծագումով ալեքսանդրիացի, եկաւ հասաւ Եփեսոս. սա մի ճարտարախօս մարդ էր եւ հմուտ՝ Գրքերին: Տեղեակ էր նա Տիրոջ ճանապարհին եւ հոգով եռում էր. խօսում եւ ճշմարտութեամբ ուսուցանում էր Յիսուսի մասին: Գիտէր միայն Յովհաննէսի մկրտութիւնը: Սա սկսեց ժողովարանում համարձակօրէն խօսել: Նրան լսելով՝ Ակիւղասը եւ Պրիսկիլան նրան իրենց մօտ առան եւ ճշմարտագոյնս բացատրեցին նրան Աստծու ճանապարհը» (Գործք. ԺԸ 14-2):

Շնորհաշատ հրեա Ապողոսը ծնվել եւ իր ուսումն ստացել էր կրոնա - փիլիսոփայական դպրոցներով հայտնի գիտական խոշոր կենտրոն Ալեքսանդրիայում եւ կարողացել էր իր մեջ միաձուլել փիլիսոփայական փայլուն ուսումը կրակոտ հավատքի հետ: Սակայն Ապողոսն իր քարոզչության ընթացքում խիստ շեշտադրում էր Հովհաննեսի մկրտությունը: Ակյուղասն ու Պրիսկիլան Ապողոսին բացատրեցին, որ Հովհաննես Մկրտչի քարոզած մկրտությունը կոչ էր ապաշխարության եւ մաքրման, իսկ Քրիստոսի մկրտությունը ենթադրում էր միաձուլում Քրիստոսի հետ՝ նրա մահվան, թաղման եւ Հարության միջոցով: Իմաստուն ամուսինները նպատակահարմար գտան Ապողոսի գիտելիքներն ուսյալ հույներին քարոզելու համար: Այս է պատճառը, որ քիչ ժամանակ անց մենք տեսնում ենք, թե ինչպիսի ջերմ ընդունելություն է գտնում Ապողոսը Կորնթոսում (հմմտ Ա Կորնթ. Ա 12; Գ 4-9; Դ 6; ԺԶ 12)[6]:

6 "The NIV Study Bible", With Study Notes and References, Concordance and Maps, Hodder և Stoughton, 2003,

Պողոս Առաքյալը, ինչպես եւ խոստացել էր, շուտով վերադառնում է Եփեսոս. նրա հետ էր նաեւ Տիմոթեոսը: Եկավ նաեւ Կորնթոսից վերադարձած Ապողոսը, որ ցանկանում էր տեսնել իր վրանագործ ուսուցիչների ուսուցչին (հմմտ. Գործք ԺԹ 1-22): Մեծ միխիթարություն էր Ակյուղասի եւ Պրիսկիղայի համար միասին տեսնել իրենց ուսուցչին եւ աշակերտին, ով խանդավառված ոգով ամբողջությամբ տրվել էր քարոզչությանը: Պողոսն իր հետեւորդների հետ սկսում է գործնականորեն զբաղվել հերձվածների կողմից ալեկոծվող Կորնթոսի եկեղեցու վիճակի բարելավմամբ՝ հենց Եփեսոսում Ք. հ. 58թ. գրելով կորնթացիներին ուղղված առաջին նամակը:

Կարելի է ենթադրել, որ Պողոս Առաքյալը Եփեսոսում անցկացրած երեք տարիների ընթացքում բնակվում էր Ակյուղասի եւ Պրիսկիղայի տանը: Երեք տարի հետո Պողոս Առաքյալը, կրկին իր խոստման համաձայն, մեկնում է Մակեդոնիա, Հունաստան եւ հանգրվանում Կորնթոսում: Հետեւելով Պողոս Առաքյալին՝ Ակյուղասը եւ Պրիսկիղան եւս թողնում են Եփեսոսը եւ Ք. հ. 54 թ., երբ արդեն մահացել էր Կլավդիոսը, մեկնում Հռոմ, այն մտադրությամբ, որպեսզի այստեղ նույնպես ծառայեին Աստծու Եկեղեցուն եւ պատրաստվեին դիմավորելու Սուրբ Պողոս Առաքյալին, ով վաղուց էր ծրագրել Հռոմ այցելությունը (հմմտ. Գործք. ԺԹ 21, Հռ. Ա 11-12): Հռոմում Ակյուղասի եւ Պրիսկիղայի տանն էր հավաքվում քրիստոնյաների մի մեծ բազմություն. այս էր պատճառը, թերեւս, որ Պողոս Առաքյալը հռոմեացիներին ուղղած իր նամակում, որ գրել էր Կորնթոսում, առաջինը ողջունում է հենց Ակյուղասին եւ Պրիսկիղային (հմմտ. Հռ. ԺՁ 3): Հռոմում արդեն ավելացել էր քրիստոնյաների թիվը եւ նրանց մեջ մեծ բազմություն էին կազմում Պողոս Առաքյալի մտերիմները, որոնցից քանվեց հոգու անունները թվարկում է Պողոսը[7]:

Ակյուղասի եւ Պրիսկիղայի մասին վերջին տեղեկությունը, որ մենք ստանում ենք Նոր Կտակարանից, արձանագրված է Եփեսոսի եպիսկոպոս Տիմոթեոսին ուղղված նամակում. «Ողջունիր Պրիսկային եւ Ակիւղասին...» (Բ Տիմ. Դ 19): Պողոս Առաքյալն Իր կյանքի վերջին օրերին գրած այս նամակում նորից հիշատակում է Ակյուղասին ու Պրիսկիղային, ինչն էլ հասկանալի է դարձնում, որ Ակյուղասն ու Պրիսկիղան վերջնականապես չէին հաստատվել Հռոմում, այլ Պողոս առաքյալի հրահանգով կրկին վերադարձել էին Եփեսոս՝ տեղական եկեղեցուն եւ Տիմոթեոս եպիսկոպոսին ծառայելու համար:

Այսպես իրենց ամբողջ կյանքը Ակյուղասն ու Պրիսկիղան նվիրեցին Քրիստոնեական Եկեղեցուն ծառայելուն՝ ամեն ինչում օգտակար լինելով Պողոս Առաքյալի քարոզչությանը: Հատկանշական է, որ նրանք երբեք միեւնույն վայրում երկար չմնացին. Հռոմ, Կորնթոս, Եփեսոս, Հռոմ, ապա նորից Եփեսոս. սրանք էին հիմնական այն քաղաքները, որտեղ անշահախնդիր կերպով քարոզչական գործունեություն էր ծավալում Ա դարի Քրիստոնեական Եկեղեցու նվիրյալ ամոլը: Նախնական Քրիստոնեական Եկեղեցում նմանատիպ մարդիկ

p. 1649.

7 Ոմանք, սակայն, սկսեցին կասկածանքով մոտենալ այն փաստին, որ Պողոսը կարող էր այդքան կարճ ժամանակում հասցրած լինել ճանաչելու այդքան շատ հավատացյալների Հռոմից, մի քաղաք, որտեղ առաքյալն անձամբ դեռ չէր էլ եղել: Այս հանգամանքը փորձեցին բացատրել նրանով, թե Պողոսի Հռոմեացիներին ուղղված նամակի 16-րդ գլխի մի մասը հասցեագրված է եղել հավանաբար Եփեսոսում գտնվող Թեբեի Եկեղեցուն ("The Oxford Bible Commentary", edited by John Barton and John Muddiman, Oxford University Press, 2001, p. 1107), չնայած այդ դեպքում եւս 16-րդ գլուխը չափազանց կարճ կլիներ իրենց առանձին նամակ ներկայացնելու համար (**R. W. John Stott**, The Message of Romans, Inter-Versity Press, 1994, p. 394):

շատ էին, ովքեր լինելով աշխարհիկ, իրենց անմնացորդ նվիրումն ու ծառայությունն էին բերում Ընդհանրական Եկեղեցու զորացման գործին:

Ակյուղաս եւ Պրիսկիղա անուններն օգտագործված են Նոր Կտակարանում վեց անգամ, եւ հետաքրքրական է, որ այս վեցից չորս անգամվա ժամանակ առաջինը հիշատակվում է Պրիսկիղայի՝ Ակյուղասի կնոջ անունը: Այս հանգամանքը շատերին ստիպել է կարծել, թե այսպիսով Ղուկաս Ավետարանիչը եւ Պողոս Առաքյալը փորձել են ցույց տալ Պրիսկիղայի ծավալած գործունեության առավել կարեւոր լինելը[8], իսկ ոմանք փորձեցին սա բացատրել այն տեսակետով, ըստ որի Պրիսկիղան հռոմեական ազնվական իշխանական տոհմի ներկայացուցիչ էր, որն ընդունել էր քրիստոնեությունը եւ հետեւաբար տոհմական պատկանելության համար է, որ Պողոսը նրա անունն ամուսնու անունից առաջ է հիշատակում: Հովհաննես Ոսկեբերան Հայրապետը, սակայն, դեռեւս Դ դարում կարծում էր, որ եւ Ակյուղասը, եւ Պրիսկիղան աղքատ քրիստոնյաներ էին հասարակ ծագումով, իսկ Պողոս առաքյալը հիշատակում էր Պրիսկիղայի անունն սկզբում, որովհետեւ ցանկանում էր ցույց տալ Պրիսկիղայի դերի կարեւորությունը տնային եկեղեցում եւ ոչ առավելությունը Ակյուղասի հանդեպ[9]:

Այսօր եւս Հռոմում պահպանվում են Պրիսկիղայի անունը կրող ժայռափոր մի գերեզման՝ կատակոմբ եւ մի եկեղեցի, որտեղ ավանդության համաձայն պահվում են նահատակների մասունքները[10]: Չնայած պարզ չէ, արդյո՞ք Գործքում հիշատակված Պրիսկիղայի մասին է խոսքը, թե ոչ, քանի որ Պրիսկիղա անունով հայտնի են նաեւ այլ նահատակ սրբուհիներ[11]:

Ակյուղասի եւ Պրիսկիղայի հետագա գործունեության մասին գրավոր աղբյուրները լռում են, սակայն համաձայն Եկեղեցու ավանդության եւ համեմատաբար ավելի ուշ՝ Է - Ը դարերում ձեւավորված վարքագրական աղբյուրների, Ակյուղասը հետագայում դարձել է Հերակլիոնի եպիսկոպոս եւ երկար ժամանակ Ասիայում քարոզչական լայն գործունեություն ծավալելուց հետո, գլխատմամբ սպանվել հեթանոսների ձեռքով[12]: Նահատակության պսակ է առել նաեւ նրա կինը՝ Պրիսկիղան, որը գաղտնի այցելություններ էր կատարում Ներոն կայսեր ժամանակ բանտարկված քրիստոնյաներին եւ ոգ եւորում ու քաջալերում էր նրանց՝ հավատքի մեջ ամուր մնալու համար: Ուղղափառ Եկեղեցում Ակյուղասը համարվում է յոթանասնից առաքյալներից մեկը ու նաեւ հիշատակվում առանձին՝ հուլիսի 14-ին, մեր Եկեղեցում, սակայն, նա չի անցել տոնացույցի մեջ: Հայ Եկեղեցու տօնացույցի համաձայն Խաչի տոնին հաջորդող չորրորդ կիրակիի նախորդ շաբաթ օրը մենք կատարում ենք Հիսուս Քրիստոսի 72 աշակերտների հիշատակը, որոնցից մեկն էլ ավանդաբար Ակյուղասն է համարվում: Չնայած այս ամենին, ինչպես եւ Շնորհք Պատրիարքն է նշում. «Արժանի էին ասոնք, որ անցնէին միասնաբար նաեւ մեր տօնացոյցի մէջ, ինչպէս անցած են միւս եկեղեցիներուն մօտ»[13]:

---

8 Տե՛ս **C. E. B. Cranfield**, Romans (ICC), էջ. 784:

9 Տե՛ս **Иоанн Златоуст**, 1-я и 2-я беседы на слова: "Целуйте Прискиллу и Акилу", "Творения", СПБ 1897, էջ 189:

10 Տե՛ս **В. Мордовцев**, Путеводитель по Риму, Спб.1875, էջ 336:

11 Տե՛ս **Lavinia Cohn-Sherbok**, Who's Who in Christianity, London and New York, 1998, էջ 250:

12 Տե՛ս **Димитрий Растовский**, Жития Святых, Июль, էջ 353:

13 **Շնորհք արք. Գալուստեան**, «Աստուածաշնչական սուրբեր», Երեւան, 1997, էջ 226: